# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանը հայտարարում է մրցույթ մարզային ենթակայության՝ հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար**

1.ՀՀ Սյունիքի մարզպետարանի ենթակայության **«Գորիսի բժշկական կենտրոն», «Քաջարանի բժշկական կենտրոն»** փակ բաժնետիրական ընկերությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն բժշկական կրթություն,
- առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, որից առնվազն 2 տարին վարչական աշխատանքի ստաժ կամ բժշկական ոլորտի ձեռնարկատիրական կամ առողջապահական համակարգի կառավարման ոլորտի առնվազն 3 տարվա ստաժ,
- իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, բաժնետիրական ընկերությունների, աշխատանքային, առողջապահության ոլորտի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր),
- կազմակերպության զարգացման ծրագրեր մշակելու կարողություն,
- աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություն, ներառյալ՝

ա) ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպման,

բ) անձնակազմի աշխատանքի ընդունման, ազատման և վերապատրաստման գործընթացների կազմակերպման,

գ) աշխատանքների բաշխման,

դ) կարգապահական պատասխանատվության,

ե) խարխուսանքի միջոցների կիրառման,

- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
- ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն, ներառյալ՝
- գույքի, ներառյալ ֆինանսական միջոցների տնօրինման, և գործարքներ կնքելու կարողություններ,
- բժշկական ծառայությունների պատշաճ մատուցման, ինչպես նաև անձնակազմի կողմից ռեսուրսների արդյունավետ օգտագործման և լրացուցիչ աշխատողների, սարքավորումների և ծառայությունների անհրաժեշտության գնահատում,
- տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
- ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն,
- առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

**«Քաջարանի բժշկական կենտրոն»** ՓԲԸ տնօրենի մրցույթը կանցկացվի **2015 թվականի մայիսի 5-ին, ժամը $10^{00}$-ին:**

**«Գորիսի բժշկական կենտրոն»** ՓԲԸ տնօրենի մրցույթը կանցկացվի **2015 թվականի մայիսի 5-ին, ժամը $12^{00}$-ին:**

**Դիմող ՀՀ քաղաքացիները ՀՀ Սյունիքի մարզպետարան (ք. Կապան, Գ. Նժդեհի 1) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.**

- դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- մեկ լուսանկար 3 x 4 չափի,
- քաղվածք՝ աշխատանքային գրքույկից,
- ինքնակենսագրություն,
- անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները,
- քաղաքացու ցանկությամբ՝ հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դրանց առկայության դեպքում,
- բնութագիր՝ վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել),
- կազմակերպության զարգացման նախնական ծրագիրը (ներկայացվում է մրցույթի օրվանից առնվազն երեք օր առաջ), որը ներառում է կազմակերպության զարգացման և բարեփոխման, ինչպես նաև կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացման հիմնական ուղենիշները, կազմակերպության կառուցվածքի և գործունեության բարեփոխմանն ուղղված առաջարկությունները: Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի հետ աշխատանքային պայմանագրի կնքման դեպքում դրանում նախատեսված ժամկետում կազմակերպության զարգացման նախնական ծրագրի հիման վրա նրա կողմից ներկայացվում է կազմակերպության զարգացման հիմնական ծրագիրը, որը ներառում է բաժիններ կազմակերպության մասնագիտական,

ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումների և դրանց իրականացման ժամանակացույցի վերաբերյալ:

Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր և պահանջվող փաստաթղթերի բնօրինակները:

**Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, ժամը $9^{30}$-$12^{30}$, բացի շաբաթ և կիրակի օրերից:**

ՀՀ քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնում են անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

***Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2015 թվականի ապրիլի 3-ը:***

***Մրցույթը կկայանա Սյունիքի մարզպետարանի շենքում*** (ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Գ.Նժդեհ 1):

***Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ*** (ՀՀ Սյունիքի մարզ, ք. Կապան, Գ.Նժդեհ 1, անձնակազմի կառավարման բաժին, հեռախոս՝ (0285) 2-53-42):